Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Կարգավար՝ օդային տրանսպորտի երթևեկության կառավարման
I. Դերը	Օդային երթևեկության կազմակերպման կանոններին համապատասխան կարգավարական տվյալ առանձնացված կետից ըստ կարգավարական աշխատանքների որոշակիացված խմբերի կազմակերպել, հսկել, կարգավորել և սպասարկել օդային երթևեկությունը, մշտական կապ պահպանել օդային տրանսպորտամիջոցների անձնակազմերի, միջանկյալ տարածքների այլ կարգավարների, օդանավակայանի այլ ծառայությունների հետ, թռիչքների հետ կապված տվյալները մուտքագրել թռիչքների կառավարման համապատասխան համակարգ, ըստ փաստացի տեղեկատվության գնահատել իրադրությունն օդային տարածքում, ընդունել հիմնավորված որոշումներ, տալ անհրաժեշտ հրահանգներ:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1 Ըստ կարգավարական կետի գործառույթների կարիքների հավաքագրել, վերլուծել և ընդհանրացնել անհրաժեշտ տեղեկատվություն	
Աշխատանքային գործընթացը	Որոշակիացնել տեղեկատվության կազմը և աղբյուրները: Հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ընդհանրացնել և վերլուծել տեղեկատվությունը: Ստացված արդյունքները համաձայնեցնել համապատասխան օղակների և ստորաբաժանումների հետ:
Կատարման չափանիշները	Կարգավարական կետի գործառույթներին համապատասխան տեղեկատվության կազմն ամբողջական է, համապատասխանում է գործող նորմատիվ ակտերի պահանջներին: Ճիշտ է ընտրվել տեղեկատվության ձեռքբերման աղբյուրները: Ճիշտ է ընտրվել տեղեկատվության ձեռքբերման մեթոդը: Ըստ իրավիճակի առկա է ամբողջական տեղեկատվությունը: Տեղեկատվության ընդհանրացման արդյունքում ձևավորված է դրանց հետագա կիրառման համար պահանջվող բազան: Տեղեկատվության ընդհանրացումը և վերլուծությունը մեթոդապես ճիշտ է կատարված: Գործընթացում կիրառված են երաշխավորված փաստաթղթեր: Ապահովված է արդյունքների համաձայնեցումը:
Խնդիրների բնագավառ 2. Նախապատրաստել, կազմակերպել, կառավարել և սպասարկել օդային տրանսպորտի մեկնումը	
Աշխատանքային գործընթացը	Փոխարինվող կարգավարից ընդունել փաստաթղթերը և սարքավորումները: Ըստ փաստացի իրավիճակի ճշտել օդային երթևեկության ամենօրյա պլանը: Ճշտել նախնական թռիչքային պլանները: Ճշտել աերոդրոմի վիճակի, օդանավ ընդունելու ու սպասարկելու պատրաստականության մասին տեղեկությունները, թռիչքների արգելքներն ու սահմանափակումները:

	Ճշտել ցանկացած թռիչքի օդանավի տիպը և պատկանելությունը: Ճշտել փաստացի և կանխատեսելի եղանակի: համապատասխանությունը օդանավի թռիչքի պայմաններին Ճշտել ժամացույցի ճիշտ ցուցմունքները: Փոխարինվող կարգավարից ճշտել իր և հարակից տարածքներում գտնվող օդանավերի տեղակայումը: Ճշտել, կառավարել, հսկել վազքուղու վրա կատարվող աշխատանքները և տեղեկացնել բոլոր ծառայություններին: Մշտական կապ պահպանել աշխատանքները կատարող ղեկավարի հետ: Անհրաժեշտության դեպքում հրահանգ տալ վազքուղին ազատելու համար: Վերգետնյա երթևեկության կառավարման կարգավարից հաղորդում ստանալ մեկնման նախնական կետում գտնվող օդանավի մասին: Օդային, օդերևութաբանական իրավիճակի և վտանգավոր օդերևութաբանական երևույթների մասին տեղեկատվությունը վերլուծել և հաղորդել հասցեատերերին: Անձնակազմին տալիս է մեկնման պատրաստ լինելու թույլտվություն: Մեկնելուց հետո վերահսկում է մեկնման ընթացքը մինչև համապատասխան բարձրությունը և անսարքության դեպքում տեղեկացնում է օդանավի անձնակազմին:
Կատարման չափանիշները	Ընդունվող փաստաթղթերը և սարքավորումները համապատասխանում են գործող նորմատիվ ակտերի պահանջներին: Օդային երթևեկության ամենօրյա պլանը ճիշտ է, համապատասխան փոփոխությունները համաձայնեցված և հաստատված են: Աերոդրոմը պատրաստ է օդանավ ընդունելու և սպասարկելու: Թռիչքների համար արգելքներ ու սահմանափակումներ չկան: Նախնական պլանում ներկայացված օդանավերի տիպերը և պատկանելիությունը ճշտված է և կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Թռիչքային և հարակից օդային տարածքներում արգելքներ չկան: Օդային և օդերևութաբանական պայմանները համապատասխանում են թռիչք կատարելու պահանջներին: Օդանավի անձնակազմը գտնվում է մեկնման նախնական կետում, ճիշտ ընդունել և հաստատել է տրված տեղեկատվությունը: Վազքուղին ազատ է և պատրաստ օդանավի մեկնման համար: Օդանավը անվտանգ հասել է համապատասխան բարձրությանը:
Խնդիրների բնագավառ 3. Նախապատրաստել, կազմակերպել, կառավարել և սպասարկել օդային տրանսպորտի ժամանումը	
Աշխատանքային գործընթացը	Փոխարինվող կարգավարից ընդունել փաստաթղթերը և սարքավորումները: Ճշտել ժամանող օդանավերի ամենօրյա պլանը: Ճշտել աերոդրոմի վիճակի, օդանավ ընդունելու և սպասարկելու պատրաստականության մասին տեղեկությունները, թռիչքների արգելքներն ու սահմանափակումները: Ճշտել փաստացի և կանխատեսելի եղանակի

	համապատասխանությունը օդանավի վայրէջքի պայմաններին: Ճշտել ժամացույցի ճիշտ ցուցմունքները: Փոխարինվող կարգավարից ճշտել իր և հարակից տարածքներում գտնվող օդանավերի տեղակայումը: Օդանավակայանի օդային տարածքի կարգավարից ճշտել վայրեջք կատարող օդանավի տիպը, համարը և տեղակայումը: Անձնակազմը կապի դուրս գալուց հաղորդել վազքուղուց հեռավորությունը, նախավայրէջքային ուղու նկատմամբ օդանավի տեղակայումը և շեղումների դեպքում տալ համապատասխան ուղղումներ, իսկ առավելագույն թույլատրվող չափերը անցնելիս՝ արգելել հետագա իջեցումը: Անձնակազմին տեղեկություններ հաղորդել օդանավակայանի օդերևութաբանական վիճակի մասին: Մինչև անձնակազմի վայրէջք կատարելուն պատրաստ լինելը մեկնման կետի կարգավարից ճշտել վազքուղու ազատ լինելը: Թույլատրել վայրէջքը: Համապատասխան պայմաններից շեղումների դեպքում արգելել վայրէջքը: Վայրեջքից հետո հաղորդել անձնակազմին վայրէջքի ժամը և անձնակազմից ստանալ վազքուղին ազատելու մասին հաղորդում:
Կատարման չափանիշները	Ընդունվող փաստաթղթերը և սարքավորումները համապատասխանում են գործող նորմատիվ ակտերի պահանջներին: Օդային երթևեկության ամենօրյա պլանը ճիշտ է, փոփոխությունները համաձայնեցված և հաստատված են: Աերոդրոմը պատրաստ է օդանավ ընդունելու և սպասարկելու: Թռիչքների համար արգելքներ ու սահմանափակումներ չկան: Նախնական պլանով ներկայացված օդանավերի տիպերը, համարները և տեղակայումը ճշտված է: Թռիչքային և հարակից օդային տարածքներում արգելքներ չկան: Օդային և օդերևութաբանական պայմանները համապատասխանում են վայրեջք կատարելու պահանջներին: Կապի դուրս եկած օդանավի տեղակայանումը համապատասխանում է նախավայրէջքային ուղու վրա գտնվելու պահանջներին: Վայրեջք կատարելու համար բացակայում են վտանգավոր օդերևույթաբանական երևույթներ կամ արգելքներ: Քամու արագությունը գտնվում է համապատասխան օդանավի համար նշանակված սահմաններում: Վազքուղու վրա տեսանելիությունը և ամպերի ներքին սահմանը համապատասխանում է օդանավի և հրամանատարի համար նշանակված սահմաններում: Մեկնման կետի կարգավարը հաստատել է վազքուղու ազատ լինելը Վայրեջքից հետո օդանավը վազքուղին ազատել է:
Խնդիրների բնագավառ 4. Ապահովել օդանավերի թռիչքային անվտանգությունը	
Աշխատանքային գործընթացը	Օդային հոսքերի կազմակերպում: Երթևեկության բնույթը հաշվի առնելով օդային երթևեկության պլանավորում:

	Երթևեկության արդյունավետության և անվտանգության տարրերի ապահովում: Նախնական, օրեկան և ընթացիկ պլանավորման կատարում: Կարգավարական տարածքներում հավասարաչափ բեռնվածության ապահովում: Իրավիճակին համապատասխան առաջարկել երթուղիների վերանայման անհրաժեշտ հիմնավորումներ: Օդային տարածքի սպասարկման ավտոմատացում: Հարակից կարգավարական կետերի ճիշտ համագործակցություն: Օդերևույթաբանական վիճակի մասին տեղեկությունների ճիշտ և ժամանակին ապահովում: Թռիչքներին առընչվող տեղեկատվության ճիշտ և ժամանակին ապահովում: Կարգավարական կետերի տեխնիկական կահավորում և ապահովում:
Կատարման չափանիշները	Կարգավարական տարածքում նշանակված ուղիները ապահովում են հոսքերի արդյունավետությունը: Բացառվում է կարգավարի գերբեռնվածությունը: Օդանավերի երկայնական, ուղղահայաց և կողային բաժանումը ապահովում է թռիչների անվտանգությունը: Օդային և օդերևույթաբանական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացումը և վերլուծությունը մեթոդապես ճիշտ է կատարված:
Խնդիրների բնագավառ 5. Կատարել մասնագիտական խորհրդատվություն	
Աշխատանքային գործընթացը	Ըստ իրավիճակների հստակ սահմանել խորհրդատվության անհրաժեշտություն ենթադրող հարցերի շրջանակը: Խորհրդատվական հարցերի շրջանակը հիմնավորել համապատասխան իրավական փաստաթղթերի պահանջներով: Բացահայտել թռիչքների անվտանգությունը պայմանավորող օդերևութաբանական երևույթների և դրանց հնարավոր փոփոխությանն առընչվող խորհրդատվության կազմը: Որոշակիացնել վտանգավոր օդերևութաբանական երևույթներից խուսափելու քայլերի և գործողությունների վերաբերյալ խորհրդատվության կազմը; Ձևավորել տեխնիկական միջոցների կարգավիճակի փոփոխման հիմնավորումներին վերաբերող խորհրդատվության նյութերը: Ձևավորել օդանավակայանի և նրա միջոցների կարգավիճակի փոփոխման հիմնավորումներին վերաբերող խորհրդատվության նյութերը: Գնահատել կարգավարական տարածքում կառավարվող և ոչ կառավարվող օդային երթևեկության մանրամասների մասին խորհրդատվություն պահանջող հարցերի շրջանակը: Ձևավորել ըստ հնարավոր կոնֆլիկտային իրավիճակ ստեղծելու հավանականության օդանավերի հետագծի գնահատմանն առընչվող խորհրդատվության մեջ ներառվող հարցերը: Սահմանել վթարային իրավիճակի նախանշանների և դրանցից խուսափելու քայլերի վերաբերյալ խորհրդատվության հարցերը:

	Կազմել չնախատեսված հանգամանքների և դրանց առաջացման դեպքում անհրաժեշտ գործողությունների բնագավառի խորհրդատվության հարցերը: Մանրամասնել օդային նավարկության հետ կապված որոշակի հաշվարկներ կատարելու մեթոդներին առընչվող խորհրդատվության մեջ ներառվող հարցերը: Պլանավորվող և ընթացիկ թռիչքային պլանների փոփոխությունների նախադրյալների խորհրդատվական հարցերի հստակեցում: Թռիչքների անվտանգության վրա ազդող այլ գործոնների մասին տեղեկատվության խորհրդատվական մանրամասների հստակեցում:
Կատարման չափանիշները	Խորհրդատվության նպատակով առանձնացված հարցերը հիմնավոր են: Խորհրդատվական նյութի բովանդակությունը ներառում է տվյալ իրավիճակում ավելի ճիշտ կողմնորոշվելու մանրամասները: Խորհրդատվությունը բացառում է հարցի ընկալման երկիմաստությունը Խորհրդատվության միջոցով հնարավոր ռիսկերի առաջացման դրսևորումների համգամանքները հիմնավորված և ներառված են: Խորհրդատվություն ստացողին տրամադրվել է փաստացի և հիմնավոր տեղեկություններ:
Խնդիրների բնագավառ 6 Կազմել հերթափոխի ընդունման և հանձնման փաստաթղթեր	
Աշխատանքային գործընթացը	Ըստ գործող նորմատիվ ակտերի պահանջների ձևավորել հերթափոխի հանձնման ընդունման փաստաթղթերի կազմը: Ընդհանրացնել փաստաթղթերի ձևավորման համար պահանջվող փաստացի տեղեկությունները: Ստուգել փաստաթղթերի ամբողջականությունը և պահանջվող տեղեկությունների լրիվությունը: Ձևակերպել հերթափոխի ընդունման-հանձնման ընթացքը:
Կատարման չափանիշները	Փաստաթղթերի կազմը համապատասխանում է գործող նորմատիվ ակտերի պահանջներին: Փաստաթղթերի ձևաչափերը պահպանված է: Փաստաթղթերի ձևավորման համար անհրաժեշտ տեղեկությունների աղբյուրները ճիշտ է ընտրված: Տեղեկությունները ձևավորված են փաստացի իրավիճակին համապատասխան: Տեղեկությունների ընդհանրացումը մեթոդապես ճիշտ է կատարվել: Փաստաթղթերն ամբողջական են, ներառված տեղեկությունները՝ լրիվ Հերթափոխի հանձնում ընդունումը ճիշտ է կատարվել:
III. Պատասխանատվությունը	Օդային տրանսպորտի երթևեկության կառավարման կարգավարը պատասխանատու է ավիացիոն երթևեկության կազմակերպման աշխատանքների՝ իր պարտականություններին վերաբերող բոլոր փուլերում իրավական և նորմատիվ ակտերի պահանջների պահպանման համար, ինքնաթիռների անձնակազմերին տրվող հրահանգների կազմի, ծավալի և հիմնավորվածության համար, ոչ ստանդարտ իրավիճակներում ընդունվող որոշումների ճշտության համար, կարգավարական այլ կետերին և ծառայություններին տրամադրվող տեղեկությունների օբյեկտիվության, ամբողջականության և ժամանակին տրամադրելու համար, տեղեկատվության աղբյուրների ճիշտ ընտրության,

	տեղեկությունները նպատակային ձևավորելու, դրանք օբյեկտիվ վերլուծելու, արդյունքներն ընդհանրացնելու համար, բոլոր փաստաթղթերը սահմանված կարգով ձևավորելու և տրամադրելու համար, ինքնաթիռի մեկնելու և ժամանելու կազմակերպման գործողությունները ճիշտ կազմակերպելու համար, աշխատանքի բոլոր փուլերում անվտանգությունն ապահովելու գործողությունները ամբողջությամբ կատարելու համար:
IV. Լեզուները	Հայերեն՝ գերազանց Ռուսերեն՝ լավ Անգլերեն՝ լավ
V. Համակարգիչը	Windows՝ բավարար MS Word՝ բավարար MS Excel՝ բավարար MS Power Point՝ բավարար Internet՝ բավարար
VI. Գիտելիքները	Թռիչքների անվտանգության ապահովման հիմունքներ: Միջազգային և ազգային ավիացիոն օրենսդրություն, ենթաօրենսդրական ակտեր: Օդերևութաբանության հիմունքները: Օդային նավարկության հիմունքները: Մարդկային գործոնը և դրա վրա ազդող գործոնները: Թռիչքների անվտանգության բարձրացման տեխնիկական, կազմակերչպական և հոգեբանական գործոնները: Կոնֆլիկտային իրավիճակների դասակարգումը և մոդելները: Օդանավակայանի և օդակայանի կառուցվածք: Քաղաքացիական ավիացիայի գործունեության կառուցվածքը: Հեռահաղորդակցման հիմունքներ: Շահագործվող սարքերի տեխնիկական հիմունքներ: Հեռահաղորդակցման տվյալների կենտրոններում սարքավորումներ սպասարկելու գիտելիքներ:
VII. Կարողությունները և հմտությունները	Օդային երթևեկության կառավարման ավտոմատացված համակարգերի և տեխնիկական այլ միջոցների շահագործման հմտություն, թռիչքի բոլոր փուլերում հրահանգները հստակ ձևակերպելու հմտություն, որոշումներ ընդունելու և գործողություններ կատարելու ընթացքում իրավական ակտերի և միջազգային պայմանագրերի պահանջները պահպանելու կարողություն, իրավիճակի առանձնահատկություններին համապատասխան հիմնավորված որոշումներ ընդունելու և օպտիմալ գործողություններ կատարելու հմտություն, ոչ ստանդարտ իրավիճակների առանձնահատկությունները ճիշտ գնահատելու կարողություն, գործընկերների և ինքնաթիռների անձնակազմերի հետ արդյունավետ հաղորդակցման հմտություն, ժամանակի արդյունավետ պլանավորման և կառավարման հմտություն, բոլոր հրահանգները և կարգադրությունները գործող կարգերին համապատասխան տալու հմտություն, աշխատանքին վերաբերող փաստաթղթերը ճիշտ կազմելու և լրացնելու հմտություն, իրավիճակները վերլուծելու և անհրաժեշտ եզրակացություններ կատարելու կարողություն, իր պատասխանատվության շրջանակներում աշխատակիցներին և

	անձնակազմերին խորհրդակցություն տրամադրելու կարողություն, աշխատանքների բոլոր փուլերում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման և վերահսկման կարողություն:
VIII. Անձնային հատկանիշները	Պարտաճանաչ, կարգապահ, ուշադիր և դիտողունակ, վերլուծական ունակություն ունեցող, թիմային աշխատանքի պատրաստ, սթրեսային իրավիճակներում արագ կողմնորոշվող, հանդուրժող, նորը ընդունելու պատրաստ, հետաքրքրասեր: